Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի
մարզի «Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան հ. 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ), պատմության (16 դասաժամ),ֆիզիկայի (18 դասաժամ), ինֆորմատիկայի (18 դասաժամ), ֆիզկուլտուրայի (19 դասա-ժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝
թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:Մրցույթին մասնակցելու համար պետք էներկայացնել՝
- դիմում (Ձեւ 1),
-մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝
ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 16-ից մինչեւ օգոստոսի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ,կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 30-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան հ. 7 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Կապան, Շահումյան 16ա:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 2-43-32, (094) 21-22-76 հեռախոսահամարներով: